ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/13

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Է. Չատինյանի (լիազորագիր, տրված՝ 01.03.2019թ.)

Ջրային կոմիտեի ներկայացուցիչներ՝

Ա. Պողոսյանի (լիազորագիր, տրված՝ 29.04.2019թ.)

Հ. Սիրունյանի (լիազորագիր, տրված՝ 29.04.2019թ.)

Քննելով Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի կողմից 23.04.2019թ. ներկայացված (25.04.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/13 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 23.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ):

Պատվիրատուի կողմից 2019 թվականի ապրիլի 17-ին թիվ 2 որոշմամբ հաստատվել է թիվ «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեքստը:

Հրավերով սահմանվել է, որ գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև 2019թ. ապրիլի 25-ը ժամը «15:00»-ն:

Հրավերի 1.1-րդ կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Ջրային կոմիտե»-ի կարիքների համար՝ «ՀՀ Արմավիրի մարզում նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքներ»-ի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որոնք խմբավորված են «16» չափաբաժիններում:

Հրավերի 2.4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

Չափաբաժին 1-16 -Ինժեներ-շինարար հիդրոտեխնիկ

Չափաբաժին 1-16 - Ինժեներ-երկրաբան-հիդրոերկրաբան

Չափաբաժին 1-16 - Ինժեներ- էլեկտրիկ

Հրավերի 2.5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները

Հ/Հ	Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
	Ավտոինքնաթափ	բեռնատվ. 7.5տ (նվազագույնը)	1

1			
2	Ավտոամբարձիչ	10տ (նվազագույնը)	1
3	Կոմպրեսոր	արտադ-յունը 10մ^3/րոպե (նվազագույնը)	1
4	Էքսկավատոր	0.25մ^3 շերեփի տարողութ. (նվազագույնը)	1
5	Եռակցող ապարատ	պոլիէթիլենային խողովակների համար	1
6	Եռակցող ապարատ	պողպատե խողովակների համար	1
7	Հորատող մեքենա	1ԵԱ-15Բ կամ համարժեք	1

Ուսումնասիրելով հրավերը՝ Ընկերությունը նկատել է, որ հրավերի պահանջներում առկա է օրենքով սահմանված պահանջների մի շարք խախտումներ, քանի որ հրավերով նախատեսված է այնպիսի դրույթներ, որոնք սահմանափակում են անձանց մասնակցությունը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ղեկավարավելով Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով Ընկերությունը 17.04.2019թ., այսինքն հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն ութ օրացուցային օր առաջ, «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ն պարզաբանում ստանալու նպատակով դիմել է Պատվիրատուին, որով խնդրել է պատասխանել հետևյալ հարցին՝ Հրավերի Երկրորդ գլխի 2.4. կետի 4-րդ ենթակետով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով պահանջվող ինժեներ-շինարար հիդրոտեխնիկ, ինժեներ-երկրաբան-հիդրոերկրաբան և ինժեներ-էլեկտրիկ միևնույն մասնագետների առկայությունը արդյո՞ք գնահատվում է բավարար, եթե մասնակիցը հայտ է ներկայացրել երկու և ավելի չափաբաժինների մասով:

Ընդ որում՝ «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ն խնդրել է վերը նշվածի հարցի վերաբերյալ տալ սպառիչ պարզաբանում:

Ի պատասխան նշված հարցմանը 2019 թվականի ապրիլի 17-ի թիվ 2 որոշմամբ հրապարակվել է հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը:

Համաձայն նշված հայտարարության՝ Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժին դիտարկվում է առանձին գնման ընթացակարգ, հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է յուրաքանչյուր չափաբաժնի համար: «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով պահանջվող ինժեներ-շինարար հիդրոտեխնիկ, ինժեներ-երկրաբան-հիդրոերկրաբան և ինժեներ-էլեկտրիկ միևնույն մասնագետների առկայությանը մի քանի չափաբաժիններում ընտրված մասնակից համարվելու դեպքում գնահատումը «բավարար» կհամարվի գնահատող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Այսինքն, ստացվում է, որ հարցի վերաբերյալ հստակ պարզաբանում չի տրվել, ինչը նույն է թե ընդհանրապես պարզաբանում չտալը, քանի որ օրենքով սահմանված պարզաբանումը իրենից ենթադրում է այո կամ ոչ պատասխանը՝ համապատասխան հիմնավորումներով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Տվյալ դեպքում հարցումը ներկայացվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված ժամկետի պահպանմամբ, ավելին հարցումը դուրս չէր հրավերի բովանդակության շրջանակից, ուստի ոչ մի պարագայում գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում չտալու:

Պարզաբանումը դա հրավերի դրույթների իմաստի պարզմանն ուղղված գործընթաց է, որը տրվում է դրանց ոչ բավարար հստակության, տարաբնույթ ընկալման, ինչպես նաև դրա կիրառման բնագավառում ծագած հարցերի պարզման անհրաժեշտության դեպքերում:

Սույն գործով գնահատող հանձնաժողովը իր կողմից տրված «պարզաբանմամբ» հայտնել է, որ «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով պահանջվող ինժեներ-շինարար հիդրոտեխնիկ, ինժեներ-երկրաբան-հիդրոերկրաբան և ինժեներ-էլեկտրիկ միևնույն մասնագետների առկայությանը մի քանի չափաբաժիններում ընտրված մասնակից համարվելու դեպքում գնահատումը «բավարար» կհամարվի գնահատող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Նման պարագայում հարց է առաջանում, ի՞նչ չափանիշներ է հաշվի առնելու գնահատող հանձնաժողովը, որ մի մասնակցի դեպքում եզրակացությամբ որոշելու է բավարար գնահատել միևնույն մասնագետների առկայությանը մի քանի չափաբաժիններում, մեկ այլ մասնակցի դեպքում՝ ոչ: Միթե՞ այս ամենը արդեն իսկ չի խոսում կողմնակալ և ոչ անաչառ գնահատող հանձնաժողովի մասին:

Գնահատող հանձնաժողովի կողմնակալության վերաբերյալ առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ կասկածները հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ գնահատող հանձնաժողովը իսկբանե խուսաբում է բարձրացված հարցի վերաբերյալ հստակ պարզաբանում տալուց, որպեսզի հետագայում, կախված իրավիճակից, իր համար ձեռնտու եզրակացություն տրամադրի:

Անկախ վերը շարադրվածից,այլ կերպ ասած անկախ պարզաբանում տալու կամ չտալու հանգամանքից, միևնույն է հրավերով նախատեսված պահանջները՝ կապված Աշխատանքային ռեսուրսներ» և «Տեխնիկական միջոցներ» բաժիններով նախատեսված պայմանների հետ, չեն կարող համարվել օրինական, քանի որ պարունակում են դրույթներ, որոնք հակասում են օրենքի պահանջներին:

Այսպես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. անհատական իրավական ակտ՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը

սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝ հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ թիվ 526-Ն որոշման «ընդհանուր դրույթներ» բաժնի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով կարգավորվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման, գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության, օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգի և դրանց առանձնահատկությունների հետ կապված հարաբերությունները, սահմանվում է «փոխկապակցված անձինք» հասկացությունը, փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը, ինչպես նաև հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ Հրավերը նորմատիվ իրավական ակտի համաձայն եւ դրա սահմանած շրջանակում ընդունված անհատական իրավական ակտ է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՝ նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի «4-րդ գլուխը» վերնագրված է հետևյալ կերպ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի՝ Սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին

վերաբերող օրենսդրական տեխնիկայի, ... վերաբերյալ դրույթների գործողությունը տարածվում է անհատական ... իրավական ակտերի վրա, ...:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ անհատական իրավական ակտը, տվյալ դեպքում թիվ «ՋԿ-ԳՀԱԾՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման հրավերը չպետք է հակասի ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող Գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ սահմանված դրույթներին:

Այն, որ հրավերը «Աշխատանքային ռեսուրսներ» և «Տեխնիկական միջոցներ» բաժինների մասով, հակասում է Գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ սահմանված դրույթներին հիմնավորվում է ստորև նշվածով՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Տվյալ դեպքում յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանել, որ անհրաժեշտ է 1 ինժեներ-շինարարհիդրոտեխնիկ, 1 ինժեներ-երկրաբան-հիդրոերկրաբան և 1 ինժեներ-էլեկտրիկ և տեխնիկական միջոցներով նախատեսված սարքավորումներ, արդեն իսկ խոսում է այն մասին, որ խախտվում է մասնակիցների մրցակցության սկզբունքը և սահմանափակվում Ընթացակարգին մասնակցող մասնակիցների շրջանակի ընդլայնման կարևորագույն սկզբունքը:

Այլ կերպ ասած, եթե մասնակիցը հաղթող է ճանաչվել մի քանի չափաբաժիններով և վերջինս կարող է նույն աշխատուժով և տեխնիկական միջոցներով, և որ ամենակարևորն է՝ հրավերով սահմանված ժամկետում, իրականացնել պայմանագրով նախատեսված

աշխատանքները, ապա ի՞նչ անհրաժեշտություն կա հրավերով նախատեսել պայման, որը լրացուցիչ և օրենքով չնախատեսված պարտականություն է դնելու մասնակիցների վրա:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ....:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ սույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Տվյալ դեպքում պատվիրատուն լինելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի սուբյեկտ, դրսևորում է վարքագիծ, որը սահմանափակում է մասնակիցների մրցակցությունը, ինչը անթույլատրելի է օրենքի մակարդակով:

Ավելին Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների, այդ թվում՝ հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով իրավասու մարմինը համագործակցում է լիազոր մարմնի և պատվիրատուների հետ:

Այսինքն, նշված նորմի իմաստից բխում է, որ Գնումների մասին ՀՀ օրենքը նույնպես դատապարտում է գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի ցանկացած խախտում, քանի որ այդ խախտումը կամա թե ակամա հանգեցնում է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սկզբունքների խախտմանը:

Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին մասի բ/ենթակետի՝պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,

- ... ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Վերոգրյալից հետևում է, որ տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների սահմանումը հրավերով պետք է լինի նորմավորված, այլ կերպ ասած պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվող ռեսուսները պետք է բխեն ՀՀ-ում գործող ստանդատներից կամ նորմատիվ տեխնիկական պահանջներից:

Տվյալ դեպքում Ընկերությունը վստահ է, որ ՀՀ-ում առկա չէ որևէ ստանդարտ կամ որևէ նորմատիվ տեխնիկական կանոնակարգ, որով առաջնորդվել է պատվիրատուն հրավերի տեքստը հաստատելիս և որի կատարումը պարտադրում է նաև գնման գործընթացի մասնակիցներին, իսկ տվյալ պարագայում չպետք է մոռանալ, որ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի՝ Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը փաստում է, որ հրավերի պահանջները սահմանվել են օրենքի խախտմամբ և հետևաբար ենթակա են փոփոխման:

Բողոքաբերը բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը.
2. Պարտավորեցնել պատվիրատուին հստակեցնել «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջները՝ կապված «Աշխատանքային ռեսուրսներ» և «Տեխնիկական միջոցներ» բաժիններով նախատեսված պայմանների հետ:

«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.04.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Ջրային կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Ջրային կոմիտեն 26.04.2019թ. թիվ 03/17/1707-19 գրությամբ հայտնել է, որ Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզում խորքային հորերի հորատման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը կազմվել է «Գնումների մասին»ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, այն է՝ մրցակցային հավասար պայմաններ ապահովել փոքր, միջին և մեծ ընկերությունների համար՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում: «ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը կազմված է 16 չափաբաժիններից և յուրաքանչյուր չափաբաժնում սահմանվել են հավասար չափանիշներ:

«ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրերի շրջանակում կատարվող աշխատանքները միտված են ՀՀ Արմավիրի մարզի Զարթոնք, Արտաշար, Եղեգնուտ, Մայիսյան, Երասխահուն, Վարդանաշեն, Մրգաշատ համայնքներում բնակչության ոռոգման ջրի կարիքների

բավարարմանը: Նշված համայնքների ոռոգելի հողատարածքները ընկած են Սև ջուր գետի, Արաքս գետի և Ախուրյանի ջրամբարի իշխման տակ, որոնք ներկա պահին չեն կարող ապահովվել անհրաժեշտ ջրաքանակով:

Միևնույն ժամանակ նշված տարածաշրջանում առկա է կոյուղաջրերի բարձր մակարդակ, որով ջրօգտագործողները իրականացնում են ոռոգում: Նշված խորքային հորերի հորատումով հնարավորություն կընձեռվի նաև ստորերկրյա ջրերը խառնել բաց հունով հոսող կոյուղաջրերին և իջեցնել վնասակար նյութերի խտությունը, ինչպես նաև տարածքում տիրող գարշահոտությունը:

Ընթացիկ տարվա ոռոգման շրջանում Արարատյան դաշտում ոռոգելի հողատարածքներում ջրի դեֆիցիտի մեղմման նպատակով Ջրային կոմիտեն մշակել է միջոցառումների ծրագիր, որում ներառվել է նաև Արարատյան դաշտի 7 համայնքներում խորքային նոր հորերի հորատման, ինչպես նաև գոյություն ունեցող հորերի վերականգնման աշխատանքներ:

Սև ջուր գետի հոսքերի խիստ նվազման պատճառով առավել հրատապ է համարվում գետի իշխման տակ ընկած հողատարածքների ջրալրման նպատակով խորքային թվով 7 նոր հորերի հորատման և 7 հորերի վերականգնման, ինչպես նաև Արաքս գետի և Ախուրյանի ջրամբարի իշխման տակ ընկած հողատարածքների ջրալրման՝ խորքային թվով 1 նոր հորի հորատման և 1 հորի վերականգնման աշխատանքները, նկատի ունենալով, որ ջրամատակարարման այլընտրանքային աղբյուր տվյալ տարածաշրջանում գոյություն չունի:

Ոռոգման համակարգերի անխափան շահագործումը և ջրի պահանջարկի ապահովումը, մեր հանրապետության պետական քաղաքականության գերակայություն-ներից է և բխում է հանրային շահերից: Խորքային նոր հորերի հորատման և հների վերականգնման աշխատանքների իրականացմամբ հնարավոր կլինի ապահովել ոռոգման ջրի անխափան մատակարարում, որը նշված համայնքներում ոռոգման շրջանում կնպաստի սակավաջրության մեղմմանը:

Հաշվի առնելով, որ «ՋԿ-ԳՀԱԾՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է ելնելով խնդրի լուծման հրատապությունից, կարևորությունից և հանրային շահերից՝ Պատվիրատուն Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձին խնդրել է, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով, թույլատրել շարունակել գնման գործընթացը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից մերժվել է Պատվիրատուի վերոհիշյալ միջնորդությունը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի կողմից վիճարկվել է հրավերի պահանջ, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նպատակահարմար չէ հանել Ընթացակարգի կասեցումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.04.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր Ընթացակարգը կազմակերպվել է 16 չափաբաժիններով և յուրաքանչյուրի համար կազմվել է առանձին նախահաշիվ: Յուրաքանչյուր չափաբաժնի մասով հրավերով նախատեսվել է «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների պահանջներ, որոնց պետք է բավարարի մասնակիցը: Ընդ որում՝ նշված պահանջները ներկայացվել են այնպես, որ հնարավորինս ընդլայնվի մասնակիցների շրջանակը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ջրային կոմիտեի կողմից Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է 16 չափաբաժիններից բաղկացած «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել են ի թիվս այլ պահանջների նախատեսվել են նաև «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման պահանջներ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի կողմից 23.04.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Ջրային կոմիտեի 26.04.2019թ. թիվ 03/17/1707-19 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

...

3) տեխնիկական միջոցներ.

....

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Կարգի 62-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Նույն Կարգի 64-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3)...

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով՝ Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է 16 չափաբաժիններից բաղկացած «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.20-րդ ենթակետով սահմանվել է, որ ***հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:***

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

Յուրաքանչյուր չափաբաժնի համար

Հ/Հ	Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	Ավտոինքնաթափ	Բեռնատվ. 75տ (նվազագույնը)	1
2	Ավտոամբարձիչ	10տ (նվազագույնը)	1
3	Կոմպրեսոր	Արտադ-յունը 10մ³/րոպե (նվազագույնը)	1
4	Էքսկավատոր	0.25մ³ շերեփի տարողութ. (նվազագույնը)	1
5	Եռակցող ապարատ	Պոլիէթիլենային խողովակների համար	1
6	Եռակցող ապարատ	Պողպատե խողովակների համար	1
7	Հորատող մեքենա	1БА-15В կամ համարժեք	1

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

Մասնագետների			
որակավորումը	աշխատանքային փորձը		
	Մասնագետների նվազագույն քանակը, մարդ	ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
Չափաբաժին 1-16 Ինժեներ-շինարար հիդրոտեխնիկ	1	առնվազն 5 տարի	հիդրոտեխնիկական ոլորտում
Չափաբաժին 1-16 Ինժեներ-երկրաբան-հիդրոերկրաբան	1	առնվազն 5 տարի	հիդրոտեխնիկական ոլորտում
Չափաբաժին 1-16 Ինժեներ- էլեկտրիկ	1	առնվազն 5 տարի	հիդրոտեխնիկական և այլ ոլորտում

Այսպես՝ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով՝ արձանագրում եմ, որ վերջինս սահմանված է Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, Կարգի 22-րդ կետի պահանջներին համապատասխան, հստակ է և որևէ տարընկալման տեղիք չի տալիս:

Գտնում եմ, որ բողոքը սույն մասով ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի հրավերով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին, ապա հստակեցման կարիք ունի. մասնավորապես՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի նախատեսված պահանջը անհրաժեշտ է նախատեսել ըստ յուրաքանչյուր չափաբաժնի մասով, քանի որ Ընթացակարգը միավորված է 16 չափաբաժիններում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմավորված է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ-ի կողմից 23.04.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

պարտավորեցնել «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում հրավերը «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով հստակեցնել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**